ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
ՄԱՐՏՈՒՆՈՒ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ
ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՈՐՈՇՈՒՄ

**N 461-Ա** **08 օգոստոսի 2022 թվական**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՄԱՐՏՈՒՆՈՒ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԱՌԱՋԱՏԱՐ ՄԱՍՆԱԳԵՏ-ՕՊԵՐԱՏՈՐԻ (ԾԱԾԿԱԳԻՐ՝ 3.1-17, ՎԱՂԱՇԵՆ ԲՆԱԿԱՎԱՅՐ), ԱՌԱՋԱՏԱՐ ՄԱՍՆԱԳԵՏ-ՕՊԵՐԱՏՈՐԻ (ԾԱԾԿԱԳԻՐ՝ 3.1-18, ՎԱՂԱՇԵՆ ԲՆԱԿԱՎԱՅՐ), ԱՌԱՋԱՏԱՐ ՄԱՍՆԱԳԵՏԻ (ԾԱԾԿԱԳԻՐ՝ 3.1-19, ՎԱՂԱՇԵՆ ԲՆԱԿԱՎԱՅՐ), ԱՌԱՋԱՏԱՐ ՄԱՍՆԱԳԵՏ-ՕՊԵՐԱՏՈՐԻ (ԾԱԾԿԱԳԻՐ՝ 3.1-20, ՎԵՐԻՆ ԳԵՏԱՇԵՆ ԲՆԱԿԱՎԱՅՐ), ԱՌԱՋԱՏԱՐ ՄԱՍՆԱԳԵՏ-ՕՊԵՐԱՏՈՐԻ (ԾԱԾԿԱԳԻՐ՝ 3.1-21, ՎԵՐԻՆ ԳԵՏԱՇԵՆ ԲՆԱԿԱՎԱՅՐ), ԱՌԱՋԱՏԱՐ ՄԱՍՆԱԳԵՏ-ՕՊԵՐԱՏՈՐԻ (ԾԱԾԿԱԳԻՐ՝ 3.1-22, ՁՈԼԱՔԱՐ ԲՆԱԿԱՎԱՅՐ), ԱՌԱՋԱՏԱՐ ՄԱՍՆԱԳԵՏ-ՕՊԵՐԱՏՈՐԻ (ԾԱԾԿԱԳԻՐ՝ 3.1-23, ՁՈԼԱՔԱՐ ԲՆԱԿԱՎԱՅՐ), ԱՌԱՋԱՏԱՐ ՄԱՍՆԱԳԵՏԻ (ԾԱԾԿԱԳԻՐ՝ 3.1-24, ՁՈԼԱՔԱՐ ԲՆԱԿԱՎԱՅՐ) ԹԱՓՈՒՐ ՊԱՇՏՈՆՆԵՐԸ ԶԲԱՂԵՑՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՄՐՑՈՒԹԱՅԻՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԿԱԶՄԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման նախարարության համակարգող նախարարի 2006 թվականի օգոստոսի 29-ի N12-Ն հրամանով հաստատված N1 հավելվածի 8.4-րդ կետի պահանջը՝

*Ո Ր Ո Շ Ո Ւ Մ  Ե Մ՝*

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Մարտունու համայնքապետարանի աշխատակազմի առաջատար մասնագետ-օպերատորի (ծածկագիր՝ 3.1-17, Վաղաշեն բնակավայր), առաջատար մասնագետ-օպերատորի (ծածկագիր՝ 3.1-18, Վաղաշեն բնակավայր), առաջատար մասնագետի (ծածկագիր՝ 3.1-19, Վաղաշեն բնակավայր), առաջատար մասնագետ-օպերատորի (ծածկագիր՝ 3.1-20, Վերին Գետաշեն բնակավայր), առաջատար մասնագետ-օպերատորի (ծածկագիր՝ 3.1-21, Վերին Գետաշեն բնակավայր), առաջատար մասնագետ-օպերատորի (ծածկագիր՝ 3.1-22, Ձոլաքար բնակավայր), առաջատար մասնագետ-օպերատորի (ծածկագիր՝ 3.1-23, Ձոլաքար բնակավայր), առաջատար մասնագետի (ծածկագիր՝ 3.1-24,

Ջուլաքար բնակավայր) թափուր պաշտոնները զբաղեցնելու համար 2022 թվականի օգոստոսի 9-ին անցկացվող մրցույթի՝ համակարգչի միջոցով ձևավորված մրցութային հանձնաժողովի կազմը՝ համաձայն հավելվածի:

2. Մրցույթի լիազորված անձ նշանակել համայնքապետարանի աշխատակազմի քարտուղարության, անձնակազմի կառավարման, տեղեկատվական տեխնոլոգիաների բաժնի գլխավոր մասնագետ Լազր Հովհաննիսյանին:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Հ. ՀՈՎԵՅԱՆ

08 օգոստոսի 2022 թվական

ք. Մարտունի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
ՄԱՐՏՈՒՆՈՒ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ
ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՈՐՈՇՈՒՄ

N 462-Ա

09 օգոստոսի 2022 թվական

## ՄԱՐՏՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 27.07.2022 ԹՎԱԿԱՆԻ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՄԱՐՏՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՁՈՐԱԳՅՈՒՂ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ 05-060-0403- 0002 ԾԱԾԿԱԳՐՈՎ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԹԻՎ 438-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի պահանջով.

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ Ե Մ՝

1.Մարտունի համայնքի ղեկավարի 27.07.2022 թվականի «Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Մարտունի համայնքի Ձորագյուղ բնակավայրի 05-060-0403-0002 ծածկագրով անշարժ գույքին հասցե տրամադրելու մասին» թիվ 438-Ա որոշման 1-ին կետում կատարել հետևյալ փոփոխությունը.

«Ղռաչներ-1/1 հասցեն» բառերը փոփոխել «Ղռաչներ-1/1,1 հասցեն» բառերով:

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ք. ՀՈՎԵՅԱՆ

09 օգոստոսի 2022 թվական
ք.Մարտունի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
ՄԱՐՏՈՒՆՈՒ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ
ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՈՐՈՇՈՒՄ

N 463-Ա 09 օգոստոսի 2022 թվական

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՄԱՐՏՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԶՈՐԱԳՅՈՒՂ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ 05-060-0403-0002 ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳՐՈՎ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻՑ ԲԱԺԱՆՎՈՂ 1.8881 ՀԱ ՄԱԿԵՐԵՍՈՎ ԳՈՒՅՔԻՆ ՆՈՐ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ կետի պահանջով, հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի 2-րդ ենթակետի և 33-րդ կետի պահանջները.

*ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝*

1.ՀՀ Գեղարքունիքի մարզի Մարտունի համայնքի Զորագյուղ բնակավայրի 05-060-0403-0002 կադաստրային ծածկագրով համայնքային սեփականություն հանդիսացող անշարժ գույքից բաժանվող 1.8881 հա մակերեսով գույքին տրամադրել հետևյալ հասցեն՝

Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզ, Մարտունի համայնք, Զորագյուղ բնակավայր, 39-րդ փողոց, թիվ 2 հողամաս հասցեն:

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Հ. ՀՈՎԵՅԱՆ

09 օգոստոսի 2022 թվական
ք.Մարտունի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
ՄԱՐՏՈՒՆՈՒ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ
ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՈՐՈՇՈՒՄ

N 464-Ա

10 օգոստոսի 2022 թվական

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՄԱՐՏՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՍՏՂԱՁՈՐ ԲՆԱԿԱՎԱՅՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ 05-013-005-003 ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳՐՈՎ ՀՈՂԱՄԱՍԸ ՈՐՊԵՍ ԱՆԺԱՌԱՆԳ ԳՈՒՅՔ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Աստղաձոր գյուղի բնակիչ Էդիկ Մեսրոբի Մելքոնյանի դիմումը և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 1224 հոդվածի պահանջներով.

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ  Ե Մ՝

1. Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Մարտունի համայնքի Աստղաձոր բնակավայրում գտնվող 05-013-005-003 ծածկագրով 0,12 հա մակերեսով տնամերձ հողամասը որպես անժառանգ գույք ճանաչել Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Մարտունի համայնքի սեփականություն:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Հ. ՀՈՎԵՅԱՆ

10 օգոստոսի 2022 թվական
ք. Մարտունի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
ՄԱՐՏՈՒՆՈՒ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ
ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՈՐՈՇՈՒՄ

N 465-Ա 10 օգոստոսի 2022 թվական

## «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԱՍՏՂԱՁՈՐ ԳՅՈՒՂԻ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆ ՋԻՎԱՆ ՍԻՐԵԿԱՆՅԱՆԻՆ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 42-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի, Հայաստանի Հանրապետության Կառավարության 19.03.2015 թվականի №596–Ն որոշման, Մարտունի համայնքի ավագանու 27.12.2021 թվականի թիվ 25-Ն որոշման պահանջներով և հիմք ընդունելով Ջիվան Սիրեկանյանի կողմից ներկայացված դիմումը.

*Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ՝*

1. «Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Աստղաձոր գյուղի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրեն Ջիվան Սիրեկանյանին տալ Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Աստղաձոր գյուղի միջնակարգ դպրոցի մարզադահլիճի վերանորոգման շինարարության թույլտվություն:
2. Պարտավորեցնել Ջիվան Սիրեկանյանին Մարտունու համայնքապետարանի 900145101060 հաշվի համարին վճարել 30000 (երեսուն հազար) ՀՀ դրամ տեղական տուրք շինարարության թույլտվության համար:
3. Պարտավորեցնել կառուցապատողին շինարարական աշխատանքներն սկսելուց առնվազն երեք օր առաջ Մարտունի համայնքի ղեկավարին ներկայացնել №2-5 ձևի տեղեկանք:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Հ. ՀՈՎԵՅԱՆ

10 օգոստոսի 2022 թվական
ք. Մարտունի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
ՄԱՐՏՈՒՆՈՒ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ
ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՈՐՈՇՈՒՄ

N 466-Ա 10 օգոստոսի 2022 թվական

# ՄԱՐՏՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՂԱՇԵՆ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ 1-ԻՆ ԽՃՈՒՂԻ ԹԻՎ 34 ԵՎ ՄԱՐՏՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՂԱՇԵՆ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ 1-ԻՆ ԽՃՈՒՂԻ ԹԻՎ 36 ՀԱՍՑԵՆԵՐԻ ԳՈՒՅՔԵՐԻ ՄԻԱՎՈՐՈՒՄԻՑ ԱՌԱՋԱՑԱԾ ՆՈՐ ԳՈՒՅՔԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35 -րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ կետի, Հայաստանի Հանրապետության Կառավարության 29.12.2005 թվականի №2387-Ն որոշման 48-րդ կետի, «Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 43-րդ հոդվածի և 46-րդ հոդվածի 2-րդ մասի պահանջներով և հիմք ընդունելով Մարիա Նազարյանի դիմումը.

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ՝

1. Մարտունի համայնքի Վաղաշեն բնակավայրի 1-ին խճուղի թիվ 34 և Մարտունի համայնքի Վաղաշեն բնակավայրի 1-ին խճուղի թիվ 36 հասցեների գույքերի միավորման արդյունքում առաջացած նոր գույքին տրամադրել Մարտունի համայնք, Վաղաշեն բնակավայրի 1-ին խճուղի, թիվ 34-36 հասցեն:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Հ. ՀՈՎԵՅԱՆ

10 օգոստոսի 2022 թվական
ք. Մարտունի

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
# ՄԱՐՏՈՒՆՈՒ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ
# ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՈՐՈՇՈՒՄ

N 467-Ա — 10 օգոստոսի 2022 թվական

## ՅՈՒՐԻ ՄԿՐՏՉՅԱՆԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՄԱՐՏՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔ, ԼԻՃՔ ԲՆԱԿԱՎԱՅՐ, Ա-2 ԹԱՂԱՄԱՍ, 6-ՐԴ ՓՈՂՈՑ, ԹԻՎ 28 ՀԱՍՑԵՈՒՄ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 42-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի, Հայաստանի Հանրապետության Կառավարության 19.03.2015 թվականի №596-Ն որոշման, Մարտունի համայնքի ավագանու 27.12.2021 թվականի թիվ 25-Ն որոշման պահանջներով և հիմք ընդունելով Յուրի Մկրտչյանի կողմից ներկայացված դիմումը.

## *Ո Ր Ո Շ Ո Ւ Մ  Ե Մ՝*

1. Յուրի Մկրտչյանին տալ Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Մարտունի համայնք, Լիճք բնակավայր, Ա-2 թաղամաս, 6-րդ փողոց, թիվ 28 հասցեում գոյություն ունեցող բնակելի տան երկրորդ հարկի կառուցման և առաջին հարկի վերակառուցման շինարարության թույլտվություն:
2. Պարտավորեցնել Յուրի Մկրտչյանին Մարտունու համայնքապետարանի 900145101060 հաշվի համարին վճարել 15000 (տասնհինգ հազար) ՀՀ դրամ տեղական տուրք շինարարության թույլտվության համար:
3. Պարտավորեցնել կառուցապատողին շինարարական աշխատանքներն սկսելուց առնվազն երեք օր առաջ Մարտունի համայնքի ղեկավարին ներկայացնել №2-5 ձևի տեղեկանք:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ — Հ. ՀՈՎԵՅԱՆ

10 օգոստոսի 2022 թվական
ք. Մարտունի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
ՄԱՐՏՈՒՆՈՒ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ
ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՈՐՈՇՈՒՄ

N 468-Ա

10 օգոստոսի 2022 թվական

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՄԱՐՏՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՊԼԱՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ԵՎ ՄԱՐՏՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2018 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 6-Ի ԹԻՎ 14 ՈՐՈՇՈՒՄԸ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ‹‹Քաղաքացիական պաշտպանության մասին›› Հայաստանի Հանրապետության օրենքի 3-րդ գլխի 7-րդ հոդվածի ժա) ենթակետի դրույթներով և ‹‹Քաղաքացիական պաշտպանության պլանների մշակման կարգը հաստատելու մասին›› ՀՀկառավարության որոշման, ինչպես նաև ‹‹Տեղական ինքնակառավարման մասին›› Հայաստանի Հանրապետության օրենքի 41-րդ հոդվածի պահանջներով, քաղաքացիական պաշտպանությունն արդյունավետ կազմակերպելու նպատակով.

*Ո Ր Ո Շ Ո Ւ Մ  Ե Մ՝*

1. Հաստատել Մարտունի համայնքի քաղաքացիական պաշտպանության պլանը՝ համաձայն հավելվածի.

2. Ուժը կորցրած ճանաչել Մարտունի համայնքի ղեկավարի 2018 թվականի փետրվարի 6-ի թիվ 14 որոշումը.

3. Որոշման կատարման հսկողությունը վերապահում եմ ինձ.

4. Որոշումը հայտարարել ըստ առնչության.

5.՝Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ                Հ. ՀՈՎՅԱՆ

10 օգոստոսի 2022 թվական
ք. Մարտունի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
ՄԱՐՏՈՒՆՈՒ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ
ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՈՐՈՇՈՒՄ

N 469-Ա

10 օգոստոսի 2022 թվական

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՄԱՐՏՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՄԱՐՏՈՒՆԻ ՔԱՂԱՔԻ ՍԱՅԱԹ-ՆՈՎԱ ՓՈՂՈՑ, ԹԻՎ 112 ՀԱՍՑԵՈՒՄ ՀԱՐՈՒԹՅՈՒՆ ԱՌԱՔԵԼՅԱՆԻՆ 25.08.2020 ԹՎԱԿԱՆԻՆ ՏՐՎԱԾ ԹԻՎ 47 ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅԱՆ ԺԱՄԿԵՏԸ ԵՐԿԱՐԱՁԳԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Հարություն Առաքելյանի դիմումը և Մարտունու համայնքապետարանի քաղաքաշինության և հողաշինության բաժնի եզրակացությունը, հաշվի առնելով, որ Հարություն Առաքելյանը չի կարողացել ավարտին հասցնել շինարարությունը և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 19.03.2015 թվականի թիվ 596-Ն որոշման պահանջներով.

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ  Ե Մ՝

1.Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Մարտունի համայնքի, Մարտունի քաղաքի, Սայաթ-Նովա փողոց, թիվ 112 հասցեում Հարություն Առաքելյանին տրված 25.08.2020 թվականի թիվ 47 շինարարության թույլտվության ժամկետը երկարաձգել մեկ տարով մինչև 10.08.2023 թվականը:

2.Սույն որոշման կատարման հսկողությունը դնել համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության և հողաշինության բաժնի պետ Հակոբ Մնացականյանի վրա:

3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Հ. ՀՈՎԵՅԱՆ

10 օգոստոսի 2022 թվական
ք. Մարտունի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
ՄԱՐՏՈՒՆՈՒ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ
ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՈՐՈՇՈՒՄ

N 470-Ա

10 օգոստոսի 2022 թվական

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՄԱՐՏՈՒՆՈՒ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԱՌԱՋԱՏԱՐ ՄԱՍՆԱԳԵՏ-ՕՊԵՐԱՏՈՐԻ (ԾԱԾԿԱԳԻՐ՝ 3.1-25, ԾՈՎԻՆԱՐ ԲՆԱԿԱՎԱՅՐ), ԱՌԱՋԱՏԱՐ ՄԱՍՆԱԳԵՏԻ (ԾԱԾԿԱԳԻՐ՝ 3.1-26, ԱՐԾՎԱՆԻՍՏ ԲՆԱԿԱՎԱՅՐ), ԱՌԱՋԱՏԱՐ ՄԱՍՆԱԳԵՏ-ՕՊԵՐԱՏՈՐԻ (ԾԱԾԿԱԳԻՐ՝ 3.1-27, ԱՍՏՂԱՁՈՐ ԲՆԱԿԱՎԱՅՐ), ԱՌԱՋԱՏԱՐ ՄԱՍՆԱԳԵՏ-ՕՊԵՐԱՏՈՐԻ (ԾԱԾԿԱԳԻՐ՝ 3.1-28, ԱՍՏՂԱՁՈՐ ԲՆԱԿԱՎԱՅՐ), ԱՌԱՋԱՏԱՐ ՄԱՍՆԱԳԵՏԻ (ԾԱԾԿԱԳԻՐ՝ 3.1-29, ԾՈՎԻՆԱՐ ԲՆԱԿԱՎԱՅՐ), ԱՌԱՋԱՏԱՐ ՄԱՍՆԱԳԵՏ-ՕՊԵՐԱՏՈՐԻ (ԾԱԾԿԱԳԻՐ՝ 3.1-30, ԾԱԿՔԱՐ ԲՆԱԿԱՎԱՅՐ), ԱՌԱՋԱՏԱՐ ՄԱՍՆԱԳԵՏ-ՕՊԵՐԱՏՈՐԻ (ԾԱԾԿԱԳԻՐ՝ 3.1-31, ՎԱՐԴԵՆԻԿ ԲՆԱԿԱՎԱՅՐ), ԱՌԱՋԱՏԱՐ ՄԱՍՆԱԳԵՏԻ-ՕՊԵՐԱՏՈՐԻ (ԾԱԾԿԱԳԻՐ՝ 3.1-32, ՎԱՐԴԵՆԻԿ ԲՆԱԿԱՎԱՅՐ) ԹԱՓՈՒՐ ՊԱՇՏՈՆՆԵՐԸ ԶԲԱՂԵՑՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՄՐՑՈՒԹԱՅԻՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԿԱԶՄԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման նախարարության համակարգող նախարարի 2006 թվականի օգոստոսի 29-ի N12-Ն հրամանով հաստատված N1 հավելվածի 8.4-րդ կետի պահանջը՝

*ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝*

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Մարտունու համայնքապետարանի աշխատակազմի առաջատար մասնագետ-օպերատորի (ծածկագիր՝ 3.1-25, Ծովինար բնակավայր), առաջատար մասնագետի (ծածկագիր՝ 3.1-26, Արծվանիստ բնակավայր), առաջատար մասնագետ-օպերատորի (ծածկագիր՝ 3.1-27, Աստղաձոր բնակավայր), առաջատար մասնագետ-օպերատորի (ծածկագիր՝ 3.1-28, Աստղաձոր բնակավայր), առաջատար մասնագետի (ծածկագիր՝ 3.1-29, Ծովինար բնակավայր), առաջատար մասնագետ-օպերատորի (ծածկագիր՝ 3.1-30, Ծակքար բնակավայր), առաջատար մասնագետ-օպերատորի (ծածկագիր՝ 3.1-31, Վարդենիկ բնակավայր), առաջատար մասնագետի-օպերատորի (ծածկագիր՝ 3.1-32, Վարդենիկ բնակավայր) թափուր պաշտոնները զբաղեցնելու համար 2022 թվականի օգոստոսի 11-

ին անցկացվող մրցույթի՝ համակարգչի միջոցով ձևավորված մրցութային հանձնաժողովի կազմը՝ համաձայն հավելվածի:

2. Մրցույթի լիազորված անձ նշանակել համայնքապետարանի աշխատակազմի քարտուղարության, անձնակազմի կառավարման, տեղեկատվական տեխնոլոգիաների բաժնի գլխավոր մասնագետ Լացր Հովհաննիսյանին:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Հ. ՀՈՎԵՅԱՆ

10 օգոստոսի 2022 թվական
ք. Մարտունի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
ՄԱՐՏՈՒՆՈՒ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ
ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՈՐՈՇՈՒՄ

N 471-Ա

10 օգոստոսի 2022 թվական

# «ՀԷՑ» ՓԲԸ-ԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՄԱՐՏՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔ, ՔԱՂԱՔ ՄԱՐՏՈՒՆԻ, ՄՅԱՍՆԻԿՅԱՆ ՓՈՂՈՑ, ԹԻՎ 16 ՀԱՍՑԵՈՒՄ ԱԴԻԿ ԳՐԻԳՈՐՅԱՆԻՆ ՊԱՏԿԱՆՈՂ ՏԱՐԱԾՔԻ 0,4 ԿՎ ԷԼԵԿՏՐԱՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 42-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի, Հայաստանի Հանրապետության Կառավարության 19.03.2015 թվականի №596-Ն որոշման, Մարտունի համայնքի ավագանու 27.12.2021 թվականի թիվ 25-Ն որոշման պահանջներով և հիմք ընդունելով «ՀԷՑ» ՓԲԸ-ի կողմից ներկայացված դիմումը.

*ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝*

1.«ՀԷՑ» ՓԲԸ-ին տալ Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Մարտունի համայնք, քաղաք Մարտունի, Մյասնիկյան փողոց, թիվ 16 հասցեում Ադիկ Գրիգորյանին պատկանող տարածքի 0,4 կվ էլեկտրամատակարարման շինարարության թույլտվություն:

2.Պարտավորեցնել «ՀԷՑ» ՓԲԸ-ին Մարտունու համայնքապետարանի 900145101060 հաշվի համարին վճարել 15000 (տասնհինգ հազար) Հայաստանի Հանրապետության դրամ տեղական տուրք շինարարության թույլտվության համար:

3.Պարտավորեցնել կառուցապատողին շինարարական աշխատանքներն սկսելուց առնվազն երեք օր առաջ Մարտունի համայնքի ղեկավարին ներկայացնել №2-5 ձևի տեղեկանք:

4.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ                    Հ. ՀՈՎՅԱՆ

10 օգոստոսի 2022 թվական
ք. Մարտունի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
ՄԱՐՏՈՒՆՈՒ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ
ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՈՐՈՇՈՒՄ

---

N 472-Ա 11 օգոստոսի 2022 թվական

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՄԱՐՏՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐԴԵՆԻԿ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ 18-ՐԴ ՓՈՂՈՑ, ԹԻՎ 25 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՀԱՅԱՍՏԱՆ ՏԻԳՐԱՆԻ ՄՈՒՐԱԴՅԱՆԻ ԳՈՒՅՔԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ՎԵՐԱԿԱՆԳՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին» 10.06.2008թ.-ի թիվ ՀՕ-117-Ն Հայաստանի Հանրապետության օրենքի դրույթներով, Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 64-րդ հոդվածի, ՀՀ կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշման 48-րդ կետի պահանջով, նկատի ունենալով, որ շենք-շինությունները կառուցվել են մինչև 2001 թվականի մայիսի 15-ը, դրանք կառուցված չեն կամ չեն գտնվում Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի, այդ թվում՝ ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման գոտիներում, չեն հակասում քաղաքաշինական նորմերին, չեն առաջացնում սերվիտուտ.

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ  Ե Մ՝

1. Վերականգնել Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Մարտունի համայնքի Վարդենիկ բնակավայրի 18-րդ փողոց, թիվ 25 հասցեում գտնվող գույքային միավորների նկատմամբ Հայաստան Տիգրանի Մուրադյանի (ծնված՝ 02.08.1933թ.) գույքային իրավունքները 05-085-0152-0015 կադաստրային ծածկագրով փաստացի օգտագործվող 0.1756 հա տնամերձ հողամասի (հողամասի հատկացումը՝ 0.20 հա) և դրա վրա օրինական կառուցված 60.15 քմ մակերեսով բնակելի տան նկատմամբ:
2. Անշարժ գույքին տրամադրել Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզ Մարտունի համայնք, Վարդենիկ բնակավայր, 18-րդ փողոց, թիվ 25 հասցեն:
3. Հողամասի վրա առկա են ինքնակամ կառուցված 42.79քմ մակերեսով բնակելի տուն, 27քմ մակերեսով բնակելի տան աստիճանահարթակ և 74.82քմ մակերեսով անասնաշենք:
4. Հողամասի սահմանները որոշվում են որակավորում ունեցող անձի կողմից կազմված և համայնքի ղեկավարի կողմից հաստատված հատակագծին համապատասխան:
5. Սույն որոշումից բխող գույքային իրավունքները ենթակա են գրանցման Հայաստանի Հանրապետության կադաստրի կոմիտեում:
6. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Հ. ՀՈՎԵՅԱՆ

11 օգոստոսի 2022 թվական
ք. Մարտունի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
ՄԱՐՏՈՒՆՈՒ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ
ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՈՐՈՇՈՒՄ

N 473-Ա 11 օգոստոսի 2022 թվական

# «ՀԷՑ» ՓԲԸ-ԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՄԱՐՏՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔ, ՔԱՂԱՔ ՄԱՐՏՈՒՆԻ, ԳԵՏԱՓՆՅԱ 2-ՐԴ ՓՈՂՈՑ, 12-ՐԴ ՆՐԲԱՆՑՔ, ԹԻՎ 7 ՀԱՍՑԵՈՒՄ ԱՐԱՐԱՏ ԳՐԻԳՈՐՅԱՆԻՆ ՊԱՏԿԱՆՈՂ ՏԱՐԱԾՔԻ 0,22 ԿՎ ԷԼԵԿՏՐԱՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 42-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի, Հայաստանի Հանրապետության Կառավարության 19.03.2015 թվականի №596–Ն որոշման, Մարտունի համայնքի ավագանու 27.12.2021 թվականի թիվ 25-Ն որոշման պահանջներով և հիմք ընդունելով «ՀԷՑ» ՓԲԸ-ի կողմից ներկայացված դիմումը.

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ  Ե Մ՝

1.«ՀԷՑ» ՓԲԸ-ին տալ Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Մարտունի համայնք, քաղաք Մարտունի, Գետափնյա 2-րդ փողոց, 12-րդ նրբանցք, թիվ 7 հասցեում Արարատ Գրիգորյանին պատկանող տարածքի 0,22 կվ էլեկտրամատակարարման շինարարության թույլտվություն:

2.Պարտավորեցնել «ՀԷՑ» ՓԲԸ-ին Մարտունու համայնքապետարանի 900145101060 հաշվի համարին վճարել 15000 (տասնհինգ հազար) Հայաստանի Հանրապետության դրամ տեղական տուրք շինարարության թույլտվության համար:

3.Պարտավորեցնել կառուցապատողին շինարարական աշխատանքներն սկսելուց առնվազն երեք օր առաջ Մարտունի համայնքի ղեկավարին ներկայացնել №2-5 ձևի տեղեկանք:

4.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Հ. ՀՈՎԵՅԱՆ

11 օգոստոսի 2022 թվական
ք. Մարտունի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
ՄԱՐՏՈՒՆՈՒ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ
ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՈՐՈՇՈՒՄ

N 474-Ա 11 օգոստոսի 2022 թվական

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՄԱՐՏՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԶՈԼԱՔԱՐ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ 5-ՐԴ ՓՈՂՈՑ, ԹԻՎ 36 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԵՐԻ ԵՎ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՀԱՍՏԱՏՈՂ ՓԱՍՏԱԹՂԹԵՐՈՒՄ ՆՇՎԱԾ ՉԱՓԻՑ ՄԻՆՉԵՎ 20 ՏՈԿՈՍ ԱՎԵԼ ՕԳՏԱԳՈՐԾՎՈՂ ՀՈՂԱՄԱՍԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԱՆԱՀԻՏ ԼՅՈՒԴՎԻԿԻ ՍԱՐՈՅԱՆԻ, ՎԱՀԱԳՆ ՎԱԶԳԵՆԻ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆԻ ԵՎ ԱՐԹՈՒՐ ՎԱԶԳԵՆԻ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆԻ ԳՈՒՅՔԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ՎԵՐԱԿԱՆԳՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին» 10.06.2008թ.-ի թիվ ՀՕ-117-Ն Հայաստանի Հանրապետության օրենքի դրույթներով, Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 64-րդ հոդվածի 2-րդ մասի պահանջով, նկատի ունենալով, որ անհատական բնակելի տունը կառուցվել է մինչև 2001 թվականի մայիսի 15-ը, շինությունները կառուցված չեն կամ չեն գտնվում ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի, այդ թվում՝ ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման գոտիներում, չեն հակասում քաղաքաշինական նորմերին, չեն առաջացնում սերվիտուտ, հիմք ընդունելով Զոլաքար բնակավայրի բնակիչ Անահիտ Լյուդվիկի Սարոյանի 11.05.2022 թվականի դիմումը՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. Վերականգնել Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Մարտունի համայնքի Զոլաքար բնակավայրի 5-րդ փողոց, թիվ 36 հասցեում գտնվող գույքային միավորների նկատմամբ Անահիտ Լյուդվիկի Սարոյանի (ծնվ. 15.06.1957 թ.), Վահագն Վազգենի Հայրապետյանի (ծնվ. 20.06.1982 թ.) և Արթուր Վազգենի Հայրապետյանի (ծնվ. 04.09.1983 թ.) բնակելի տան և սպասարկման համար անհրաժեշտ 05-034-0167-0036 կադաստրային ծածկագրով փաստացի օգտագործվող 0.1654 հա տնամերձ հողամասի և դրա վրա օրինական կառուցված 121.56 քմ մակերեսով բնակելի տան (կառուցված՝ 1988 թ.), 69.67 քմ մակերեսով կիսանկուղի (կառուցված՝ 1988 թ.), 12.35 քմ մակերեսով բնակելի տան փակ պատշգամբի (կառուցված՝ 1988 թ.), 33.37 քմ մակերեսով հացատուն-անասնաշենքի (կառուցված՝ 1995 թ.) և 2.84 քմ մակերեսով պարիսպի (կառուցված՝ 1995 թ.) գույքային իրավունքները (համաձայն չափագրման փաստաթղթերի):

2. Բնակելի տանը և կից կառույցներին տրամադրել Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզ, Մարտունի համայնք, Ձոլաքար բնակավայր, 5-րդ փողոց, թիվ 36 հասցեն:
3. Հատկացված հողամասի չափից ավել օգտագործվող 0.0054 հա բնակելի կառուցապատման հողամասը (հատկացվել է 0.16 հա, փաստացի օգտագործվում է 0.1654 հա) ճանաչել որոշման 1-ին կետում նշված անձանց սեփականությունը:
4. Սույն որոշումից բխող գույքային իրավունքները ենթակա են գրանցման Հայաստանի Հանրապետության կադաստրի կոմիտեի կողմից:
5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Հ. ՀՈՎԵՅԱՆ

11 օգոստոսի 2022 թվական
ք. Մարտունի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
ՄԱՐՏՈՒՆՈՒ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ
ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՈՐՈՇՈՒՄ

N 475-Ա — 11 օգոստոսի 2022 թվական

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՄԱՐՏՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԶՈՐԱՀԱՎԱՔԱՅԻՆ ՄԱՐՄՆԻ ԿԱԶՄԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ‹‹Պաշտպանության մասին›› ՀՀ օրենքի 6-րդ գլխի, ինչպես նաև ‹‹Նորմատիվ իրավական ակտերի մասին›› ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի պահանջներով.

*ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝*

1. Հաստատել ՀՀ Գեղարքունիքի մարզի Մարտունի համայնքի զորահավաքային մարմնի հետևյալ կազմը՝

Հովհաննես Հովեյան - համայնքի ղեկավար
Վահագն Դավթյան - համայնքի ղեկավարի առաջին տեղակալ
Մարզպետունի Մանուկյան – համայնքի ղեկավարի խորհրդական
Հասիկ Սիմոնյան - համայնքի ղեկավարի խորհրդական
Սաշա Բավեյան - Երանոս բնակավայրի վարչական ղեկավար
Մաքսիմ Ավետիսյան - Վարդաձոր բնակավայրի վարչական ղեկավար
Արարատ Սաֆարյան - Զոլաքյուղ բնակավայրի վարչական ղեկավար
Արտաշես Մխիթարյան - Ծովասար բնակավայրի վարչական ղեկավար
Արարատ Ավետիսյան - Ծակքար բնակավայրի վարչական ղեկավար
Հայկ Հոխիկյան - Լիճք բնակավայրի վարչական ղեկավար
Ռուբեն Զոլյան - Ներքին Գետաշեն բնակավայրի վարչական ղեկավար
Տիգրան Մուրադյան - Վերին Գետաշեն բնակավայրի վարչական ղեկավար
Հարություն Հայրապետյան - Մադինա բնակավայրի վարչական ղեկավար
Վարդան Պողոսյան - Գեղհովիտ բնակավայրի վարչական ղեկավար
Արմեն Շահինյան - Վաղաշեն բնակավայրի վարչական ղեկավար
Մխիթար Ալեքսանյան - Աստղաձոր բնակավայրի վարչական ղեկավար
Հրայր Մարգարյան - Զոլաքար բնակավայրի վարչական ղեկավար
Արմեն Ավետիսյան - Վարդենիկ բնակավայրի վարչական ղեկավար
Հայկարամ Թառփոշյան - Ծովինար բնակավայրի վարչական ղեկավար
Ռուբիկ Սիրականյան - Արծվանիստ բնակավայրի վարչական ղեկավար
Հակոբ Մնացականյան - Քաղաքաշինության և հողաշինության բաժնի պետ

Հարություն Հարությունյան - Գյուղատնտեսության և բնապահպանության բաժնի պետ
Թաթուլ Դավթյան - Ֆինանսատնտեսագիտական, եկամուտների հաշվառման և հավաքագրման բաժնի պետ
Աիարոն Խաչատրյան - Զարգացման ծրագրերի, տուրիզմի, առևտրի, սպասարկման և գովազդի բաժնի պետ
Դավիթ Դավթյան - Կրթության, մշակույթի, սպորտի և երիտասարդության հարցերի բաժնի պետ
Նարեկ Շահինյան - սոցիալական աջակցության և առողջապահության հարցերի բաժնի պետ
Զավիկ Խաչատրյան - Իրավաբանական բաժնի պետ
Գագիկ Ոսկանյան - Քաղաքաշինության, անձնակազմի կառավարման, տեղեկատվական տեխնոլոգիաների բաժնի պետ
Թաթուլ Դավեյան - աշխատակազմի գլխավոր մասնագետ
Մելիք Քարամյան - աշխատակազմի առաջատար մասնագետ (Երանոս)
Էմիլ Սահրադյան - աշխատակազմի առաջատար մասնագետ (Զոլաքար)
Ռուբեն Մուրադյան - աշխատակամի առաջատար մասնագետ (Ծովասար)
Հրայր Հարությունյան - աշխատակազմի առաջատար մասնագետ (Լիճք)
Վահագն Զալիբեկյան - աշխատակազմի առաջատար մասնագետ (Ներքին Գետաշեն)
Արմեն Հովսեփյան - աշխատակազմի առաջատար մասնագետ (Վերին Գետաշեն)
Ալֆրեդ Հակոբյան - աշխատակազմի առաջատար մասնագետ (Գեղհովիտ)
Արմեն Հունանյան - աշխատակազմի առաջատար մասնագետ (Վաղաշեն)
Նվեր Սողոյան - աշխատակազմի առաջատար մասնագետ (Զոլաքար)
Մանվել Մելքոնյան - աշխատակազմի առաջատար մասնագետ (Վարդենիկ)
Գևորգ Գևորգյան - աշխատակազմի առաջատար մասնագետ (Ծովինար)
Արտյոմ Ասլանյան - «Մարտունի համայնքի թիվ 1 կոմունալ սպասարկում և բարեկարգում» ՀՈԱԿ-ի տնօրեն
Գուրգեն Ավետիսյան - համայնքապետարանի տնտեսվար

2. Սույն որոշման ընդունմամբ ուժը կորցրած ճանաչել Մարտունի համայնքի ղեկավարի 2017թ. հունիսի 2-ի թիվ 03-Գ որոշումը:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Հ. ՀՈՎԵՅԱՆ

11 օգոստոսի 2022 թվական
ք. Մարտունի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
ՄԱՐՏՈՒՆՈՒ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ
ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՈՐՈՇՈՒՄ

N 476-Ա 12 օգոստոսի 2022 թվական

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՄԱՐՏՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԼԻՃՔ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ 05-039-0176-0006 ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳՐՈՎ ԳՈՒՅՔԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35 -րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ կետի, Հայաստանի Հանրապետության Կառավարության 29.12.2005 թվականի №2387-Ն որոշման 48-րդ կետի, «Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մաին» Հայաստանի Հանրապետության օրենքի 43-րդ հոդվածի և 46-րդ հոդվածի 2-րդ մասի պահանջներով,

*Ո Ր Ո Շ Ո Ւ Մ  Ե Մ՝*

1. ՀՀ Գեղարքունիքի մարզի Մարտունի համայնքի Լիճք բնակավայրի համայնքային սեփականություն հանդիսացող 05-039-0176-0006 կադաստրային ծածկագրով գույքին տրամադրել Մարտունի համայնք, Լիճք բնակավայր, Ա7 թաղամաս,5-րդ փողոց, թիվ 15/1 հասցեն:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Հ. ՀՈՎՅԱՆ

12 օգոստոսի 2022 թվական
ք. Մարտունի

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
# ՄԱՐՏՈՒՆՈՒ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ
# ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՈՐՈՇՈՒՄ

N 477-Ա 12 օգոստոսի 2022 թվական

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՄԱՐՏՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՐԾՎԱՆԻՍՏ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ 22-ՐԴ ՓՈՂՈՑ, ԹԻՎ 8 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀՈՂԱՄԱՍՈՒՄ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի դրույթներով, 16.12.2021 թվականի ՀՕ-397-Ն օրենքի 2-րդ հոդվածի 2-րդ մասի, «Անշարժ գույքի հարկով հարկման նպատակով անշարժ գույքի շուկայական արժեքին մոտարկված կադաստրային գնահատման կարգը սահմանելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի պահանջներով, հիմք ընդունելով «Ինքնակամ կառույցների օրինականացման և տնօրինման կարգը հաստատելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի թիվ 912-Ն որոշումը, Հայաստանի Հանրապետության կառավարության 2020 թվականի հունիսի 4-ի N1023-Ն որոշումը, նկատի ունենալով, որ կառույցի պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը կամ վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը, այն կառուցված չէ ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում, կառուցված չէ քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումներով, չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք, ինչպես նաև հիմք ընդունելով Մարտունի համայնքի Արծվանիստ բնակավայրի բնակիչ Լիանա Լևոնի Զաքարյանի կողմից ներկայացված դիմումը ինքնակամ կառուցված շինությունները օրինականացնելու վերաբերյալ.

## *Ո Ր Ո Շ ՈՒ Մ Ե Մ՝*

1. Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Մարտունի համայնքի Արծվանիստ բնակավայրի 22-րդ փողոց, թիվ 8 հասցեում գտնվող, Լիանա Լևոնի Զաքարյանին (ծնված 09.08.1969 թվականի), Վաղո Վաչիկի Զաքարյանին (ծնված 26.11.1986 թվականի), Զաքար Վաչիկի Զաքարյանին (ծնված 16.10.1988 թվականի) և Արթուր Վաչիկի Զաքարյանին (ծնված 31.05.1995 թվականի) սեփականության

իրավունքով պատկանող 05-016-0021-0008 կադաստրային ծածկագրով, 0,19317 հա փաստացի օգտագործվող բնակելի կառուցապատման հողամասի վրա ինքնակամ կառուցված 134,68 քմ արտաքին մակերեսով բնակելի տունը (ներքին մակերեսը՝ 105.75 քմ, կառուցված 2003 թվականին), 12.60 քմ մակերեսով բնակելի տան աստիճանահարթակը (կառուցված 2003 թվականին) և 54,97 քմ արտաքին մակերեսով հացատուն-անասնաշենքը (ներքին մակերեսը՝ 40.85 քմ, կառուցված 2003 թվականին) ճանաչել օրինական:

2. Օրինականացման համար հիմք ընդունել լիցենզավորված չափագրողի կողմից ներկայացված հատակագիծը:
3. Առկա է ՀՀ Կադաստրի կոմիտեի կողմից տրամադրված հաշվառման (չափագրման) տվյալների մուտքագրման տեղեկանքը (չափագրման տվյալների ծածկագիրն է՝ 2022G2ZMPJ):
4. Ինքնակամ կառույցների օրինականացման վճարը կազմում է՝

բնակելի տան համար՝ 134,68x874=117 710 (մեկ հարյուր տասնյոթ յոթ հարյուր տաս) ՀՀ դրամ

բնակելի տան աստիճանահարթակի համար՝ 12,6x874= 11 012 (տասնմեկ հազար տասներկու) ՀՀ դրամ

հացատուն-անասնաշենքի համար՝ 54,97x524,4=28 826 (քսանութ հազար ութ հարյուր քսանվեց) ՀՀ դրամ:

Ընդամենը՝ 157548(մեկ հարյուր հիսունյոթ հազար հինգ հարյուր քառասունութ) ՀՀ դրամ:

5. Սույն որոշման ընդունման օրվանից օրինականացման համար սահմանված վճարները 60-օրյա ժամկետում չվճարելու դեպքում որոշումը համարել ուժը կորցրած:
6. Սույն որոշումից բխող գույքային իրավունքները ենթակա են գրանցման ՀՀ կադաստրի կոմիտեի կողմից:
7. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Հ. ՀՈՎԵՅԱՆ

12 օգոստոսի 2022 թվական
ք. Մարտունի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
ՄԱՐՏՈՒՆՈՒ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ
ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՈՐՈՇՈՒՄ

N 478-Ա 12 օգոստոսի 2022 թվական

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՄԱՐՏՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԶՈԼԱՔԱՐ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ 05-034-0107-0002 ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳՐՈՎ ԳՈՒՅՔԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35 -րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ կետի, Հայաստանի Հանրապետության Կառավարության 29.12.2005 թվականի №2387-Ն որոշման 48-րդ կետի, «Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մաին» Հայաստանի Հանրապետության օրենքի 43-րդ հոդվածի և 46-րդ հոդվածի 2-րդ մասի պահանջներով, և հիմք ընդունելով Վրեժ Սիմոնյանի դիմումը.

*Ո Ր Ո Շ ՈՒ Մ  Ե Մ՝*

1. ՀՀ Գեղարքունիքի մարզի Մարտունի համայնքի Զոլաքար բնակավայրի 05-034-0107-0002 կադաստրային ծածկագրով գույքին տրամադրել Մարտունի համայնք, Զոլաքար բնակավայր, 3-րդ փողոց, թիվ 46 հասցեն:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Հ. ՀՈՎԵՅԱՆ

12 օգոստոսի 2022 թվական
ք. Մարտունի

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ**
**ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ**
**ՄԱՐՏՈՒՆՈՒ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ**
**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՈՐՈՇՈՒՄ**

N 479-Ա | 12 օգոստոսի 2022 թվական

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՄԱՐՏՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԳԵՂՀՈՎԻՏ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ 5-ՐԴ ՓՈՂՈՑ, ԹԻՎ 117 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԳՈՒՐԴԱՖԵՐԴ ՍԱՄՍՈՆԻ ԲՋՆՈՒՆՈՒ ԵՎ ԱՐՇԱԿ ԱԼՖՐԵԴԻ ԲՋՆՈՒՆՈՒ ԳՈՒՅՔԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ՎԵՐԱԿԱՆԳՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին» 10.06.2008թ.-ի թիվ ՀՕ-117-Ն Հայաստանի Հանրապետության օրենքի դրույթներով, Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 64-րդ հոդվածի պահանջով, նկատի ունենալով, որ անհատական բնակելի տունը կառուցվել է մինչև 2001 թվականի մայիսի 15-ը, շինությունները կառուցված չեն կամ չեն գտնվում ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի, այդ թվում՝ ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման գոտիներում, չեն հակասում քաղաքաշինական նորմերին, չեն առաջացնում սերվիտուտ, հիմք ընդունելով Գեղհովիտ բնակավայրի բնակիչներ Գուրդաֆերդ Սամսոնի Բջնունու և Արշակ Ալֆրեդի Բջնունու դիմումները.

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ  Ե Մ՝**

1. Վերականգնել Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Մարտունի համայնքի Գեղհովիտ բնակավայրի 5-րդ փողոց, թիվ 117 հասցեում գտնվող գույքային միավորների նկատմամբ Գուրդաֆերդ Սամսոնի Բջնունու (ծնված՝ XX.XX.1938 թվականին) և Արշակ Ալֆրեդի Բջնունու (ծնված՝ 21.01.1965 թվականին) բնակելի տան սպասարկման համար անհրաժեշտ 05-027-0154-0011 կադաստրային ծածկագրով փաստացի օգտագործվող 0.0128 հա տնամերձ հողամասի և դրա վրա օրինական կառուցված 101.01 քմ մակերեսով բնակելի տան (կառուցված՝ 1960 թվականին) նկատմամբ գույքային իրավունքները (համաձայն չափագրման փաստաթղթերի):
2. Բնակելի տանը տրամադրել Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզ, Մարտունի համայնք, Գեղհովիտ բնակավայր, 5-րդ փողոց, թիվ 117 հասցեն:
3. Սույն որոշումից բխող գույքային իրավունքները ենթակա են գրանցման Հայաստանի Հանրապետության կադաստրի կոմիտեի կողմից:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ  ՀՈՎՀԱՆՆԵՍ ՀՈՎԵՅԱՆ

12 օգոստոսի 2022 թվական
ք. Մարտունի

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
# ՄԱՐՏՈՒՆՈՒ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ
# ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՈՐՈՇՈՒՄ

N 480-Ա                                                        12 օգոստոսի 2022 թվական

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՄԱՐՏՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԳԵՂՀՈՎԻՏ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ 5-ՐԴ ՓՈՂՈՑ, ԹԻՎ 119 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԳՈՒՐԴԱՖԵՐԴ ՍԱՄՍՈՆԻ ԲՋՆՈՒՆՈՒ ԵՎ ԱՐՇԱԿ ԱԼՖՐԵԴԻ ԲՋՆՈՒՆՈՒ ԳՈՒՅՔԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ՎԵՐԱԿԱՆԳՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին» 10.06.2008թ.-ի թիվ ՀՕ-117-Ն Հայաստանի Հանրապետության օրենքի դրույթներով, Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 64-րդ հոդվածի պահանջով, նկատի ունենալով, որ շինությունները կառուցվել են մինչև 2001 թվականի մայիսի 15-ը, շինությունները կառուցված չեն կամ չեն գտնվում ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի, այդ թվում՝ ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման գոտիներում, չեն հակասում քաղաքաշինական նորմերին, չեն առաջացնում սերվիտուտ, հիմք ընդունելով Գեղհովիտ բնակավայրի բնակիչներ Գուրդաֆերդ Սամսոնի Բջնունու և Արշակ Ալֆրեդի Բջնունու դիմումները.

## *Ո Ր Ո Շ Ո Ւ Մ   Ե Մ՝*

1. Վերականգնել Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Մարտունի համայնքի Գեղհովիտ բնակավայրի 5-րդ փողոց, թիվ 119 հասցեում գտնվող գույքային միավորների նկատմամբ Գուրդաֆերդ Սամսոնի Բջնունու (ծնված՝ XX.XX.1938 թվականին) և Արշակ Ալֆրեդի Բջնունու (ծնված՝ 21.01.1965 թվականին) շինությունների սպասարկման համար անհրաժեշտ 05-027-0154-0009 կադաստրային ծածկագրով փաստացի օգտագործվող 0.0926 հա տնամերձ հողամասի և դրա վրա օրինական կառուցված 101.5 քմ մակերեսով հացատան, անասնաշենքի և ավտոտնակի (կառուցված՝ 1972 թվականին) նկատմամբ գույքային իրավունքները (համաձայն չափագրման փաստաթղթերի):
2. Հացատանը, անասնաշենքին և ավտոտնակին տրամադրել Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզ, Մարտունի համայնք, Գեղհովիտ բնակավայր, 5-րդ փողոց, թիվ 119 հասցեն:
3. Սույն որոշումից բխող գույքային իրավունքները ենթակա են գրանցման Հայաստանի Հանրապետության կադաստրի կոմիտեի կողմից:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝                                        ՀՈՎՀԱՆՆԵՍ ՀՈՎՅԱՆ

12 օգոստոսի 2022 թվական
ք. Մարտունի